


Ug. Lherzyne

Гельминтозы -  
бескостные  
млекопитающие



Ա. ԼԻՍԻՑՅԱՆ

19 NOV 2010

ԵՐԱՊԵՏՔԱՆԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶՄԱՆԵՐՈՒՄ

ՀՕ.ՎԵ.Վ.Ա.Վ.՝ ԽԵՂԱԿԱՐԻԱՆԵՐ ՎԵՐԱԿԱ  
ՀՈՎ յիշ Աղրբեանում:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ / ՀԱՄԵՒ N. 55.

Ա. ԼԻՍԻՑՅԱՆ

796  
L-61



# ԵՐԱԿՈՒՐՍԻԱՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

### ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

ՀԱ.Վ.ԵԼ.Վ.Յ.՝ ԵԲԱԿՈՒՐՍԻԱՆԵՐ ՎՐԱՅՈՒՄ  
ԲՈՎ ԱՅԼ Ապրիլանում:

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ա. Ա. ԽՈՇՀՐԴԻ № 55.  
ՅԵՐԵՎԱՆ 1927

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Այս մարշրուտները առաջին փորձն են  
Հայաստանի սահմաններում հնարավոր եքըս-  
կուրսիաների զլիսավոր ուղիները նշելու:  
Աշխատել ենք ցուցյ տալ թե այդ ուղինե-  
րի ինչ յերկույթների վրա կարելի յե-  
ղարձնել եքսկուրսանալի գիտողությունը:  
Այդ ցուցմունքները ոգտավետ կարող են  
լինել նաև այն անձնագործությունների հա-  
մար, զորոնք տեղերում, տեղական բազանե-  
սում կուղենան յեկվորների համար ուղե-  
ցուցյ հանդիսանալ նրանց շրջագայություն-  
ների ժամանակ:

Հայաստանից դուրս, Անդրկովկասյան  
մյուս հանրապետությունների համար բեր-  
ված են միայն այն մարշրուտները, զորոնք  
թիֆլիսից տաճում են զեպի ծայրակետերը՝  
Բաթում, Բագու և Վլադիկավկաս:

Գրքույկը կազմել ենք ՀՍԽՀ Կենտր.  
Քավառագիտական Բյուրոյի ունեցած նյու-  
թերի հիման վրա:

ՏՄԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔՍԻ ՓՈԴ. № 29  
ԳՐԱՌԵԹ. 226Բ  
ՏԻՐԱԺ 500. Պ. 64

## № 1. ՅԵՐԵՎԱՆ-ԴԻԼԴԱՆ

(113 կլմ. խճուղի)


ՅԵՐԵՎԱՆԻ (1042 մ. ծովի մակերևույթից  
բարձր)

Յերևանը վրապես հայաստանի Ս. Խ. Հանրապետության մայրաքաղաք Հանրապետական բարձրագույն հիմնարկները։ Ժողկոմիություն, Կենտրոնական և այլ համայնքային կառավագական համակարգ։

Զբոսանի Արովյանի (Սուրեհն Սպան-  
դարյանի արձանը) և Շահումյանի փողոց-  
ներով, Կոմունարների այգում (Մայոսի Ալ-  
-ահվերդյանի արձանը), հին արհեստանոց-  
ների և քարվանսարաների թաղով, հին բա-  
ռով, Կոնդ քաղաքամասով:

Այց Սարդարի պալատի (կանանց և  
ող) մեացորդներին: Տեսարան գետի Մա-  
րտը, Արագածն ու Հրազդանի ձորը:  
-մեջիդ և իր բակը: Հին թրքական բա-  
ռակիր:

Urg. 1011, p. 11:



Յերեանի պլանը: Ծանոթություն նոր  
պլանի հետ:

Յերեանի այդինքնի վոռողումը. Հրազ-  
դանից և Գետասից հանած առուները:

Խորությունը. Հրազդանի ձորի բա-  
զալտի և տուֆի շերտերը: Հիդրոշն (2.800  
ձիառժ.՝) —առուն, մեքենաների շենքը. հիդ-  
րոշնի նշանակությունը:

Զբարդությունը: Նոր բազանիք — (Խորհուրդնե-  
րի փ. 14):

Յերեանի պատաբությունն ու ալգե-  
գործությունը: 1 խորհրդային տնտեսու-  
թյունը (նախկին Սարգարի և կից այդինե-  
րը — 67 հեկտար) — նրա գիտական և գործնա-  
կան նշանակությունը: Աղեքութաբանական  
կայանը՝ Հայաստանի կենտրոնական կայան:

Պտուղների չորացում և կոնսերվացում:  
Կոնսերվի գործարան — (Անինի փողոց, 9).

Գինեգործությունը Յերեանում: Հին  
հնան և հին նկուղ՝ կարասներով: «Արարատ»  
տրեսուր և իր գործարանը (Շահումյան փո-  
ղոց 31) — գինեգործական, ողեքարշ, կոն-  
յակային բաժինները, նկուղները, տակառա-  
շինարանը: Կարմիր անկյուն:

Հայբամբակ և նրա գործարանը (յեր-  
կաթուղու կայարանի մոտ). — բամբակազմու-

լան, ձեթի և ոճառի գործարաններ: Կարմիր  
անկյուն:

Կաշիի գործարաններ՝ 1-նը (կայարանի  
մոտ) և 2-րդը (Հրազդանի ափին). Նոր սար-  
քավորում. սոսնձագործություն և մուշտակ-  
ների բաժիններ, ելքարազաց:

Գարեջրի գործարան (Հրազդանի ափին):  
Լիմոնագի գործարան («Արարատ» գոր-  
ծարանի մոտ):

Ծխախոռի գործարան (Ղանթարի մոտ)  
Մեխանիկական գործարան (Անինի  
փող. 28) — մեխանիկական (փականագործ և  
շրջատաշ) բաժին, ձուլարան, դարրնոց,  
կաղապարանոց:

Կարբիտի գործարան (կայարանի մոտ):  
Գորգի արհեստանոց (Մսի շարք, 38).  
աեղական և յեղոստական նախշեր, բուսա-  
կան ներկեր:

Հայկինո (անկյուն Սպանդարյան և  
Տերյան փ. փ.) ակցիոներական ընկերու-  
թյունը կինոլաբորատորիայով և կինո գոր-  
ծարանով:

Տպարաններ՝ ա) Պոլիգրաֆտրեստի 1-ին  
(Ռուբենի փ., Կուլտուրայի տուն) — լինուտիալ  
և ձուլարան, և 2-րդ (անկյուն Սպան-  
դարյան և Բաֆֆու փ. փ.) — ցինկոգրաֆիա,  
վիմագրատուն, գծարան, կազմատուն, և բ)

Պետհրատի (Խորհուրդների վ. 2) տպարան  
կազմատնով:

Պրոգեսիոնալ կազմակերպությունները:

Կոռպելատիվի ցանցն ու աշխատանք-  
ները:

Կը թական հաստատություններ—1. Պետհամալսարան (Աբովյան փ.)  
—մանկավարժական (պատմա-լեզվադիտա-  
կան, կենսարանական և մաթեմատիկական  
բաժիններով), սոցիալ-տնտեսական, բժշկա-  
կան, գյուղատնտեսական, տեխնիկական  
ֆակուլտետներ: Լարորատորիաներ—քիմի-  
ական, ֆիզիքական և ֆիզիոլոգիական: բնա-  
պատմական թանգարան: Կաթնատնտեսա-  
կան ֆերմա, Անտոռմիկում: Գրադարան:

2. Կոնսերվատորիա (Սպանդարյան փ.  
60)—դաշնամուրի, ջութակի, վիոլոնչելիի,  
արևելյան գործիքների, փողավոր գործիքնե-  
րի և յերգեցողության դասարաններ:

3. Գեղարվեստական—արդյունաբերա-  
կան տեխնիկում (Տպագրողների փողոց 2)—  
նկարչություն և քանդակագործություն.  
արհեստանոցներ: ա) ասեղնագործի (Շահ-  
ումյան փ. 49) և բ) վսուկերչության (Աբով-  
յան փողոց 2) գ) բրուտանոց:

Թանգարաններ—1. Պետթան-  
գարան (Աբովյան փ., Կուլտուրայի տուն):

Բաժիններ՝ գեղարվեստական (արևմտա-  
յիլուսական, ռուսական և հայկական ար-  
վեստ), հնագիտական (քարի, բրոնզի և յեր-  
կաթի դարերի իրեր, քանդակներ, Անիի հը-  
նություններ), ազգագրական, պատմագրա-  
կան և հեղափոխական բաժիններ:

2. Գյուղատնտեսական թանգարան  
(Կուլտուրայի տուն) և գյուղատնտեսական  
լաբորատորիա:

3. Մանկավարժական թանգարան (Ա-  
միրյան փ. 26)—քիմիկո-քիմիական, բնա-  
պատմական, աշխարհագրական և հասարա-  
գիտական բաժիններ. արհեստանոց:

Հանրային մատենադարան  
Ա. Ֆ. Մասնիկյանի անվան իշխանություն  
(Սպանդարյան, 1. Կուլտուրայի տուն) —մոտ  
200 հազար գիրք. ընթերցարաններ հասա-  
կավորների և մանուկների համար:

Բժշկական հաստատություններ—1. Տրոպիկական ինստիտուտ (Աբով-  
յան փ. 41)—մալարիայի հետազոտություն.  
պայքար մալարիայի դեմ:

2. Լենինի անվան կինիկական ինստի-  
տուտ (Աբովյան փ., Համալսարանին կից)  
—140 մահճակալ. տերոպետիկ, նյարդային,  
խիլուրգիական և մանկաբարձական-գենիկո-

լոգիական բաժանմունքներ. ունատգենյան  
կարբնետ, ենկարութարան:

Անչափահամերի ուղղիչ կրթական գա-  
ղութ՝ (Կոնդ):

Գյուղաց ու տուն. — (Գյուղու-  
շը վ. 3): —Մահճակախներ. սալերի և  
տափարի բակ: Գյուղատնտեսական գործեր-  
ների ցուցազրական պահեստ:

Յերեանի անցյալը: Յերեանի խաների  
կառավարությունը: Ոռուսաց տիրապետու-  
թյան հաստատվելը: Յերեանը XIX և XX-րդ  
դարերում:

Հեղափոխական շարժումները Յերե-  
պահում:

Էռուսական բարձր հիմնարկ-  
ները: Հեղեկինակոմ և Յերեանի Գավկուս-  
կոմ (Աբովյան վ. 33 և 34): Ագիտ կարի-  
նետ (ծանոթություն կուսուսավորության  
աշխատանքներին):

ՔԱՆԱՔԵՌ Յերեանի և Արարատյան  
դաշտի տեսարանը Քանաքեռի կողմից. Մա-  
ստիսներն ու Արագածը Քանաքեռից: Աբով-  
յանի տունը:

ՊՏՂՆԻ, ԵՅԼԱՌ, ՍՈՒԽՈՅ ՖԱՆՏԱՆ,  
ՆԵՐԲԻՆ ԱԽՏԱ. — Յերեարանական կաղմու-  
թյունը. որսիդիանի («սատանի յեղունդի»)  
շերտեր:

Տնտեսության փոփոխվելը՝ յերկրի  
բարձրանալուն հետ միասին:  
Պաղնու հին տաճարը:  
Ելառի սեպագիր արձանագրությունը:  
ՅԵԼԵՆՈՎԿԱ (1940 մ. ծովի մակ.): Ծա-  
նոթություն ոռուս ազգաբնակության Հայաս-  
տան գաղթելու հանդամանքների հետ: Ռուս-  
ների նիստ ու կացը և տնտեսությունը.  
տարրերությունը տեղական նիստ ու կացից  
ու տնտեսությունից. ոռուսական տարրի և  
տեղացիների փոխարարերությունը նախա-  
նականիսական շրջանում և Խորհրդային իշ-  
խանության հաստատվելուց հետո: Ռուսա-  
կան և տեղական կուլտուրաների փոփաղ-  
դիցությունը:

Մալականների կրօնական հայացքները,  
Պրիգունները:

ՅԵՎԱՆԱ. Լիճ (1925 մ. ծովի մակ.):  
վութից):

Շրջագայություն Սեանա լճով շողենա-  
վով:

Լճի տարածությունը (ամենամեծ յեր-  
կարությունը՝ 72,5 կմ.՝ ամենամեծ լայնու-  
թյունը՝ 37,5 կմ., մակերեսությը՝ 1.398,7 ք.  
կմ.) և հատակի ձևն ու խորությունը (ա-  
մենախոր տեղը կզու հյուսիս արեւլյան  
կողմը՝ 95 մետր), լճի հրաբուխային ծագումը

ՀՀ պարզված՝ արդյոք մի ահապին հանգած  
հրաբուղիսի խանութան և, թե հին հրա  
բուղիների շրջանակի մեջ իջած յերկրակե-  
ղեր բեկոր, թե հրաբուսային ուժերի գոր-  
ծունելությունից ըերանը գոյած ահապին  
ձոր). Լճի ջրի մակերեսի պարբերաբար  
բարձրանալն ու իջնելը; Լճի բռւսական և  
կենդանական աշխարհները; Սևանալճի ձկնե-  
րը. սիգի ձկան բուծումը; Զկնարուծական  
կայան ձկնագիտական բաժնով; Զկնորու-  
թյան հին և նոր ձեկը և չափերը; Ձկան  
արտահանության նախկին և այժմյան կազ-  
մակերպությունը:

Նավարկությունը Սևանա լճի վրա:

Սևանա լճի վոռոգողական նշանակու-  
թյունը; Նոր ծրագիրներ:

Սևանա լճի ավագանի անցյալ կյանքը;  
Մարդու սկզբնական կայաններ այդ ավա-  
գանում; Ռւրարդական մԽացորդները. Ռբթաք-  
լուի, Քոլագունի, Զաղալուի, բնեռագիր-  
ները; Սևանա լճի ավագանը վորպես. Սյու-  
նիքի մի մասը; Այրիվանք, Նորադուզ, Սևա-  
նա կղզին և նրա վանքերը:

Արշալույս և վերջալույս Սևանա կղզու  
վրա:

ՍԵՄՅՈՒՆՊՎԿԵ (2170 մ.):

Վերելք դեպի լեռնանցքը Արաքսի հով-

ալից գլափի կուրի հովիտը (ջրբաժան); Տօր-  
բերություն Յելենովկայի և Սեմյոնովկայի  
տնտեսությանց մեջ; Պանրագործարան:

Տեսարան արշալույսին և վերջալույսին  
դեպի Սևանա լիճը:

Ուսւ գաղութների դասավորության քա-  
ղաքանությունը Հայտատանում-ցարական  
ժամանակ (լեռնանցքներին և ճանապարհնե-  
րի հանդույցներին):

ԴԻԼԻԶԱՆ (1257 մ.):

Եջբ խճուղու զիկզակներով. Դիտողու-  
թյուն Դիլիջանի անտառի:

## № 2. ԴԻԼԻԶԱՆ-ԱՂՍՏԱՖԱ

(75 կլմ.)

ԴԻԼԻԶԱՆ (1257 մ. ծովի մակ.):

Դիլիջանը վարդես գավառի կենտրոն,  
գավառի բաժանումը ըստ գավառամասերի:

Դիրքն ու կիման: Գետի աջակողմյան  
ափին սարալանջի սահումը:

Տեղական անտառը, չամի պուրակներ,  
Անտառային անկարան: Պաղաքուծությունը  
և նրա աջողությունները:

Անասնաբուժարան, նրա գիտական և  
գործնական նշանակությունը; Որինակելի

փեթականոց, պաղաքուծարան և պաղանուն  
պարտեզ: Կաթնատնտեսություն:

Կոռպիրատիվ ցանցը գավառում:

Դիլիջանի նշանակությունը Ղաղախի  
քոչվորների քոչի ժամանակ:

Դիլիջանը վորպես կլիմայական կայան:  
Սանատորիա:

Բանակումբ:

Հեղափոխական շարժումները Դիլիջա-  
նում և նրա գավառում: Դիլիջանի կատա-  
րած դերը Հայաստանի խորհրդայնացման  
միջոցին:

Ա.Ղ.ՍՏԱ.ՖԱ. ԳԵՏԻ ՑՈՐԸ

Չորի յերկրաբանական կազմությունը:  
Հանքային հարստությունները: Վիմագրա-  
կան քարահանքը:

Անտառների դասավորությունը: Պտղա-  
տու ծառերի տեսակների դասավորությունը  
Ճորի ուղղությամբ՝ տեղի բարձրության  
համամատ:

Զ ա ր ի ն ե չ. Ի ջ և ա ն.—Նրանց արն-  
տեսական դերը շրջակա դյուղերի նկատ-  
մամբ:

Թ ա ր ս ա չ ա յ ի ճորը վորպես ճանա-  
պարհ դեպի Սևանա լճի հյուսիս-արևելյան  
ափերը (Նաքեժդինո գյուղը):

Աղստաֆա—Դիլիջան ինուղին վորպես

Հաղախի քոչվոր ազգաբնակության զինա-  
վոր ուղին դեպի յայլաները: Այդ խճուղին  
վորպես Այրաբատյան գաշտը կուր գետի  
հովտի հետ կապող գլխավոր ճանապարհը  
մինչև Թիֆլիս-Յերևան յերկաթուղու կա-  
ռուցումը: Աղստաֆա-Դիլիջան-Յերևան յեր-  
կաթուղիզի կառուցման ծրագիրը:

Չորի պատմուկան անցյալը. «Չորա-  
փոր»—«Կայան»: Նրա կուլտուրական վայրե-  
րը: Եյց՝ Հաղարծնի, Զուխտակ և Գոշա-  
վանքերին: Ամրոցների մնացորդները: Չորը՝  
վորպես թաթարաց արշավանքների տա-  
րածման զինավոր ուղիներից մեջը կուրի  
ստորին տափաստաններից դեպի Հայկական  
Լոռնաշխարհը:

Գ.Ա.ԶԱ.Խ-Ա.Ղ.ՍՏԱ.Ֆ յերկաթուղային կայ-  
տան—[Աղբբեջան] (320-310 մ. ծովի մակ):

Հաղախի դաշտը: Աղստաֆ և այլ լեռ-  
նային գետերի վոռոգողական նշանակու-  
թյունը: Ազգաբնակության տնտեսության  
կրկնակի բնույթը—յերկրագործությունն ու  
անասնապահությունը: Անասնապահների ա-  
մառային քոչը. քոչի ժամանակը, ուղղու-  
թյունն ու ծավալը. ամառային յայլաների  
դասավորությունը: Քոչի ազդեցությունը  
տնտեսության վրա:

Հայ-թուրքական հարաբերությունները

յարական ժամանակը և խորհրդային իշխանության որով:

### № 3. ՅԵՐԵՎԱՆ-ԱՐՑՈՒ-ԴԱՐԱՁԻՉԱԳ

Մինչև Արգսի Յերեանից 23 կլմ. Խճուղին բաժանվում է Դիլիջանի գլխավոր խճուղուց Ելասից վերև

Մինչև Դարձիչակ 56 կմ։ Խճուղին  
բաժանվում է Դիլիջանի խճուղուց Ներքին-  
Ախտալից։

ՅԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՐ, ՊՏՂՆԻ, ԵՅԼՈՒԹ  
ահս մարդուուս № 1:

ԱՐԳՎԻՒՆԻ

Հանքային աղբյուրների բյուման վայ-  
րերը. Ջրերի բաղադրությունն ու բուժիչ  
նշանակությունը. Կուրորտի հիմնումը  
և բարեկարգումը Խորհրդային իշխանության  
որով:

Հին պարիացների մնացորդները:

ՍՈՒԻՆՈՅ ՖԱՆՏԱՆ, Ն.-ԱԽՏԱ. ահս մար-  
շրուտ № 1:

## ԴԱՐԱՁԻՉԱԳ (ԾԱՂԿԱԶՈՒ):

Միսիանի ձորի յերկրաբանական կտղ-  
մությունը: Անտառները: Տեղական տնտե-  
սությունը: Ազգաբնակության կազմի մեջ  
մինչև խորհրդայնացումը տեղի ունեցած  
փոփոխությունը:

Դարաշիչագը վորպես ամարանոց։ Հանդիսադասն առաջնական տուն։

«Անապաստան յերեխաների բարեկամ-ների լոնկերության «Մանկատունը»:

Հնագիտական մնացորդները: Կեչառուքի վանքը:

Զըսսանք անտառում, ծառատնկատ-  
ներում:

#### № 4. ՅԵՐԵՎԱՆ-ԶԱԳ

17 կմ.: Սայլուղի՝ Ավանով, Խճուղի՝  
Դիլիջանի խճուղոց:

**ՅԵՐԵՎԱՆ (տես մարդություն № 1):**

ԱՎԱՆ:

Ավանի քարահանքը: Կիլլսոյան շենքերի հետքերը քարահանքի մոտ:

Ավանի տաճարի մնացորդները:

249.

2-ըդ Խորհրդային տնտեսություն (109 հեկտար): Խոզաբուծարան, կաթնային ֆերմա, որինակելի պատղարուծարան, արհեստական անտոռ, ծխախոտի ագարակ:

Զագավանոքի մնացորդները:

## № 5. ՅԵՐԵՎԱՆ-ԳԱՌՆԻ-ԳԵՂԱՐԴ

Մինչև Բաշ-Գառնի-28 կլմ., մինչև Գեղարդ-37 կլմ. Սայլուղի:

ՅԵՐԵՎԱՆ-տես մարշրուտ № 1:  
ՈՂՋԱԲԵՐԴ:

ՄԵՐՃԱՆԱՋԻՆ գոտու տնտեսությունը:  
ՅԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ կազմությունը. ծովային  
քարացած վոստրեննը, քարայրեր:  
ԳԱՐԻՆԻ (Բաշ-Գառնիին կից):

Գառնիի ձորը վորպես ճանապարհ Հայաստանի նախնի մայրաքաղաքներից—Արտաշարից և Դիլինից գեղի Սևանա ծովի ավագանի հարավային կողմը և ապա դեպի Պարտավա (Կուրի ստորին հովիտը): Գառնի ամրոցը՝ Հոռմեյական գորքերի կայան: Ամրոցի և տաճարի մեացորդները «Տրդատի թախտ»:

ԳԵՂՋՐԴ:

Անգան ծագումը: Ժայռափոր վանքերը  
(«Այլիլանք»):

ՎԵՐԱՊԵՏԱ

Շորբուլաղ-Թոխմախովյով կամ Գառնի գետի ձորով Ղամարլու—Արտաշարով (տես մարշրուտ № 6):

## № 6. ՅԵՐԵՎԱՆ-ՂԱՄԱՐԼՈՒ—ԱՐՏԱՇԱՐ (ԴՎԻՒՆ)

ՅԵՐԵՎԱՆԻ մինչև Ղամարլու՝ յերկաթուղով  
31 կլմ., խճուղով՝ 30 կլմ.

Արտաշար (Դվին) գյուղը Ղամարլու կայարանից—6 կլմ. հեռու՝ սայլուղի:  
ՅԵՐԵՎԱՆ (տես մարշրուտ № 1):  
ՑԱՄԱՐԼՈՒ—ԱՐՏԱՇԱՐ:

Ղամարլուն վորպես անտեսական կենտրոն Գառնի-Բասար և Վեղի-Բասար շրջանների: Գյուղերի խտությունը նրա շուրջը: Նրա աճումը նախապատերագմական ժամանակ և խորհրդայնացումից հետո:

Ղամարլուն՝ ստորագիր գտառ տնտեսության բնորոշ անկյուն: Լեռնային գետերի վոռոգողական նշանակությունը, առուները: Այգեգործությունը (Արտաշարի գինին). բամբակի, բրինձի, կունջուտի, ծխախոտի բուծումը: Սերմնափոխության հաջորդականությունը:

Կոնյակի գործարաններ:

Արտաշար-Ղամարլու-Խորվիրապ վորպես Հին մայրաքաղաքների շրջան—Վուտան:

Խ դ. հետին հիմած Դվին մայրաքաղաքն, նրա նշանակությունը, մանավանդ

արաբների տիրապետության ժամանակ:  
Դվինի (Արտաշարի մոտ) ամրոցի և միջնա-  
բերդի ավերակները. Ս. Գրիգոր յեկեղեցին:

## № 7. ՅԵՐԵՎԱՆ-ԵԶՄԻԱՇԻՆ-ԱՅՂՋՅՈՒ

Յերեանից մինչև Եջմիածին—20 կմ. խճուղի:  
Եջմիածնից մինչև Այրովու սայլուղի—  
15 կմ.:

ՅԵՐԵՎԱՆ—տես մարզբուտ № 1:

ՓԱՌԱՋԱՐ գյուղի մոտ—3-րդ Խորհրդ-  
դային անտեսություն (545 հեկտար)՝ դաշ-  
տամշակություն (հացաբույսեր, բամբակ,  
արհեստական խոտաբուծություն). որինա-  
կելի այգի: Բրնձաղտիչ և բամբակաղտիչ  
գործարաններ:

ԶՎԱՐԹՆՈՅՑ—խճուղոց մեջ կլմ. ձախ:  
Ս. Գրիգոր, կամ Զվարթնոց կլոր յեռահարկ  
տաճարի (VII դ. առաջին կեսի գործ) ավե-  
րակները: Կաթողիկոսական ավարանքի մնա-  
ցորդները: Սեպագիր արձանագրությունը:

ՎԱՐԴԱՐԱՋԱՐԱԾ (862 մ. ծովի մակ.):

Վաղարչապատը վորպես Այրարատյան  
դաշտի բնորոշ գյուղ: Այդեղործական կո-  
ռոպերացիա: Փորձաղաշտ: Շերամապահական  
կայան:

ՅԵՐԵՎԱՆ-ՄԱՏԱՐ լիճը. տեսարան գեղի  
Մասկոները:

Կոռպերատիվ ցանցը գտվառուն:  
Բանակումը:

Վաղարշապատը վորպես հայ Արշակու-  
նիների մայրաքաղաք և գարից—օնոր քա-  
ղաք»—«Կայնողութիւն»:

Ե ջ մ ի ա ծ ն ի տաճարը, նրա սկզբնական  
ձեփի մասին յեղած կարծիքները, Եջմիածինը  
վորպես կաթողիկոսանիստ վանք: Նրա գե-  
րը հայկական կուլտուրական և քաղաքա-  
կան կյանքի մեջ: (Ավանդություններ հայոց  
յեկեղեցու սկզբնալորության մասին): Հին  
ընտրական ձեերի մնացորդները կաթողիկո-  
սի և յեպիսկոպոսների բնտրություն և ոծ-  
ման ժամանակ:

Եջմիածնի «Հնագիտական և պատմա-  
պագագրական թանգարանը»: Ուրարտական  
սեպագիրներ, հունական և հայկական ար-  
ձանագրություններ, IV-VII դ. գ. բարձրա-  
քանդակ քարեր, հայկական յեկեղեցական  
պատկերագրություն, ժողովրդական զգեստ-  
ներ ձեռագործներ աղքագրական այլ նյու-  
թեր: Գեղարվեստա-արդյունագործական ի-  
րեր (1232 թ. բրոնզե կաթոսան):

Եջմիածնի մատենագրանը. 8.000 ձե-

նազիրներ և 80.000 տպագիր հրատարակուու.  
թյուններ:

Հռ ի փ ս ի մ ելի (VII դ. նրա քառակուսի  
գմբեթավոր ճարտարապետական տիպը),  
Եռ դ ա կ ա թ ի և Գ ա յ ա ն ե լ ի տաճար-  
ները:

Գամառ-Քաթիպայի արձանը նախկին  
Ճեմարանի բակում:

Տան և հինգ կոմունարների գերեզ-  
մանն ու մահաբանը—նույնտեղ: Միջմիու-  
թենական բանակումբ:

ԱՅՆԻ-ԳՅՈՒԼ:

Լճի ծագումը: Նրա բուսական և կեն-  
դանականաշխարհը: Զրամրարձ կառուցված-  
քը՝ Եջմիածնի հողերը գոռոգելու համար  
Սև ջուրի ակունքը:

ՋԵՑՎԱ. գյուղի հնագիտական հուշար-  
ձանները (անծանոթ նախկիր—գրեր):

№ 8. ՅԵՐԵՎԱՆ-(ԵԶՄԻԱԾԻՆ)-ԱՇՏԱՐԱԿ-  
ԲԱՇԱԲԱՐԱՆ-ԼԵՆԻՆԱԿԱՆ—ՎԵՐԵԼՔ Ա-  
ՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹԸ.

Յերևանից կարելի յե ուղեորվել կամ  
ուղղակի Աշտարակ Համամլուի խճուղով,  
(20 կմ.) կամ Եջմիածնի և Ռշականի վրա-  
յով (24 կմ.):

Այս մարշրուտով Յերևանից մինչև Լե-

նինական—126 կլմ. Խճուղի մինչև Բաշա-  
բարան, իսկ այնուհետեւ սայլուղի մինչև Լե-  
նինական:

ՅԵՐԵՎԱՆ-ԵԶՄԻԱԾԻՆ—տես մարշրուտ  
№ 7.

ՈՇԱԿԱՆ. Հայկական գրերի գյուտարար  
Մհարուղ-Մաշտոցի գերեզմանը: Ութակող  
ոյունը խոյակով:

ԱՇՑԱՐԱԿԻ. Աշտարակի գյուղատնտեսու-  
թյան տարրերությունը Այրարատյան (Վա-  
ղարշապատի) գաղտի անտեսությունից:

Մ ո դ ն ո ւ, Ո հ ա ն ա վ ա ն ք ի տաճարները:

Կ ա ր բ ի, Ուշի, Դ ա շ ն ա ֆ ա ր ի  
Ա բ ա ր ա ն ի ա յ լ գյուղերի տնտեսության  
փոփոխվելը համեմատ տեղի բարձրության:  
Անասնականության գերը այդ շրջանում:  
Բասարի գետի վերնագավառի բուսականու-  
թյունը: Արարանի պատմական անցյալը:

ԱՐԱԳԱԾԻ (4083 մ.):

Վերելը կարելի յե սկսել Աշտարակ-  
Բյուրականից, կամ Բաշաբարանից, կամ  
փորը գերադասելի յե, Ղազնաֆարից:

Ղազնաֆարից Դալլչայ գետի հոսան-  
քով վեր: Գիշերել սարվորների (ուշեցիների)  
վրաններում: Զրվեժ: Արագածի խառն-  
աբանը: Արագածի թագի ներքին և արտա-

քին կողմերը: Մառցային լճակներ: Մառցա-  
րան:

Երջակայքի տեսարանը Արագածի դա-  
դաթից: Բացվող պանորամայի գլխավոր  
կետերը:

Արագածի հետ կապված ավանդություն-  
ներն ու յերգերը:

Արագածի յերկրաբանական ծագումը.

Հոգի գանավորությունը շեռան լանջե-  
րին ակսած Այրարատյան դաշտից մինչև Ա-  
րագածի գագաթը:

Արագածի ջրերը, նրանից բղիսող գե-  
տերը:

Բույսերի տեսակների փոփոխությունը  
ուղղանաց գոտիների ուղղությամբ: Տըն-  
տեսության ձերի գասավորությունը ըստ  
նույն գոտիների: Արագածի անտեսության  
ապագան:

Վորսը Արագածի լանջերին:

Յայլաներ, խաչնարածությունն ու տ-  
նասնապահությունը յայլաներում: Սարվոր-  
ների կյանքը: Յեղիդիներ և քյուրդեր. ծա-  
նոթություննրանց տնտեսության և աղքա-  
զբության հետ:

Արագածի լանջերին գտնված մեզալիտ-  
ները (մենգիրներ, դոլմիններ, կրոմլիններ),  
և հին վուոզողական սիստեմի մնացորդները:

Եջք գեղի Ղաղնաֆար:

(Վասովի կամ ձիով ճամփորդողները կա-  
րողեն իջնել դեղի Ղաղնա (Հասիճ)՝ Արտիկ  
լենինական):

ԲԱՇԱԲԱՌԱՆ

Եջք գեղի Շիրակի դաշտը—Քարվան-  
սարայով (պանրագոծարան)՝ Ղուլիջանով—  
Լենինական:

Լենինական

Լենինականը, վորպես Շիրակի տնտե-  
սական, կուլտուրական և վարչական կենտ-  
րոն:

Շիրակի տնտեսությունը (համեմատու-  
թյուն Այրարատյան դաշտի և Արարանի  
տնտեսության հետ):

Տես մարշրուտ № 10:

## № 9. ՅԵՐԵՎԱՆ-ՍԱՐԴԱՐԱԿՈՎԱ-ԱՆԻ- ԼԵՆԻՆԱԿԱՆ

Յերկաթուղի=155 կմ.

ՅԵՐԵՎԱՆ—Տես մարշրուտ № 1:

Այրարատյան դաշտ: Տեսարան դեղի  
Մասիներն ու Արագածը:

Սպիտակահողի ջրջան: Հրագդանի, Բա-  
սախի և Սև ջրի ձահիճներն ու յեղեղնուտ-  
ները (վարազի վորս):

Գյուղական շինքեր (քարի պակասություն):

ՍՍ.ԲԴ.Ա.ՊԱ.Տ (859 մ.) կայարանի մոտ բամբակլոմի պահեստներն ու 3-րդ գործարանը:

ԼՈՒԿԱՆԵՐ-կոմունա:

Սարդարապատի անապատն ունիրա վոռպումը:

Ա.Ա.Գ.Յ.Ա.Զ կայարան, յերկաթուղու վերեքը զեսի Շիրակի դաշտն: Հողմահարության ուժեղ յերևույթները:

ԱՆԻ ԿԱ.Յ.Ա.ՐԱ.Ն. Պեմզայի հանքերը:

Վերջին յերկաշարժից ամենաշատ վընասված վայրերը (Քյալալի-Բայանդուր):

ԼԵՆԻՆԱԿԱՆ

Տես մարշրուտ № 10:

## № 10. ԼԵՆԻՆԱԿԱՆ-ՂԱՐԱՔԼԻՍԱ-ԱԼ- ԼՈՅՎԵՐՏԻ-ԹԻՖԼԻՍ (ՎՐԱՍՏԱՆ)

Յերկաթուղի-մինչև Ալահվերդի 114 կմ., մինչև Թիֆլիզ (Վրաստան)՝ 220 կմ.

ԼԵՆԻՆԱԿԱՆ- (1470 մ. ծովի մակ.):

Տեսարան քաղաքային այգու բլուրից վերջալույսին: Այց Ախուրյանի ափերին:

Շիրակի դաշտի յերկարանական ծագումը: Նախկին ծովի հատակ լինելու հետ-

քերը: Շիրակը վորպիո չայկական հրաբ խային բարձրավանդակի (Խոնավ—Ձաջուռ—Արագած և Արսիսն-Մողանլուղ յերկրաբանական ճեղքերի միջև) մի մասը: Վերջին ժամանակվա հրաբդիային յերևույթները. վերջին յերկրաշարժն ու նրա պատճառած ավերածությունները. քաղաքում և գյուղերում:

Տեղական (Բարձր Հայքի) ժողովրդական «զառնապաւճ» աները և յերկրաշարժների ցնցումներին նրանց հարմարեցրած լինելը:

Շիրակի սեահողը և նրա արգավանդությունը: Հացահատիկային մշակույթ: Բանջարաբուծություն (շաքարաբաղուկ ցանելու փորձերը): Պաղարբուծության փորձեր: Փորձադադաշտ:

Լենինականի սլանը: Լենինականը վորպես ամրոց: Նրա զորանոցները—կազաչի պոստ, Սեփերսկիյ, Պալիգոն: Անիկի ճարտարապետության աղղեցությունը քաղաքի շինքերի վրա (քարտաշության զարգացումը. Փրկչիկ Աստվածածնի յեկեղեցիները):

Լենինականը զորպես վարչական, կուլտուրական (զպրոցներ, ակումբներ) և տնտեսական կենտրոն: Նրա շուկայի նշանակությունը գավառի համար:

Կոռպերատիվի ցանցը կավառում և նրա  
աշխատանքները:

Շիրկանալ—տունել և ցանցը, Լեն-հիդ-  
րուեն:

Մանվածագործաբանը,  
Դարեջը գործարանը,  
Բանվորների թվի արագ աճումը, Բան-  
ակումը:

Ամերկում և նրա վորբանոցները (արհես-  
տանոցներ, ազարակներ):

Կույրերի գլուցը:

Շիրակի յերգն ու բանաստեղծությունը,  
Յերաժշտությունը:

Շիրակի անցյալը: Այց՝ Մարմաշեն, Հա-  
ռիճ: Լենինականի հիմնարկումը: Լենինակա-  
նչամաշխարհային պատերազմի ժամանակ:  
Հոկտեմբերյան հեղափոխության անդրա-  
դարձումը: Խորհրդայնացումը և ներկա վի-  
ճակը:

ԶԱԶՈՒԻՌԻ լեռնանցքը:

Արտօսի և Կուր գետերի ավազանների  
ջրածան (1800 մ.): Տունելը (2 կմ.):

Հողի, բուսականության և գյուղատն-  
տեսական մշակույթի և գյուղերի արտաքին  
տեսքի փոփոխությունը՝ յերկաթռաղու գծի  
ուղղությամբ: Զաջառի լեռնանցքից մինչև  
Թիֆլիս:

ՓԱՄԲԱԿԻ հովիտը:

Անտառների դասավորությունը նրա  
յերկու կողմերի լեռների վրա:

Համաշխարհային պատերազմի հետքերը  
Փամբակի զյուղերում և արագ վերաշինու-  
թյունը խորհրդայնացումից հետո:

ՂԱՐԱԲԻՒՆ (1324 մ.):

Յերեք գետերի գետախառնուրդ: Խնձո-  
րաբուծության զարգացումը: Տնկարան:

Տեքստի գործարան:

Դարաքլիսան վորպես ամարանոց և  
Հայաստանի զորքերի ամառային բանակա-  
տեղի: Հանգստյան տուն:

ՓԱՄԲԱԿԻ—ԴԵԲԵԴԻ հիմքը (Զորագետ):

Զորի յերկրաբանական կազմությունը:  
Եփճի կողերի ձեր հողն ու բուսակա-  
նությունը, ծառերի գասավորության կանո-  
նավորությունը:

Մեղվագահական անտեսությունը Փամ-  
բակ կիսա-կայարանի մոտ:

Դեբեգի ձորը Հովհ. Թումանյանի յեր-  
կերի մեջ: Զորը յերկաթուղի անցկացնելուց  
առաջ և հետո:

Զորագետի հիգրոշենի նախագիծը:

Սիսի, Շահալու, Ելիարի, Շամլուղի և  
Ալլահվերդու պղնձահանքերը:

ԱԼԱՎԵՐԴԻ: Ալլահվերդին վորպես լո-

ոռւ պղնձահանքերի կենարոն։ Նրա արտա-  
գրականությունը մինչև համաշխարհային  
պատերազմը և հետո։

Հինինի անվան և Շամլուղի հանքաայ-  
րերը։ Կ. Մարքսի անվան զործարանը, Հիդրո-  
կայան։ Բանվորների բնտկարանները։ Աշ-  
խատանքի առողջապահիկ պայմանները։ Ար-  
միություն և բանակումը Կարմիր անկյան։

Աշխատանքների վերականգնման տեմպը  
բաղաքացիական կոիմներից հետո՝ Խորհր-  
դային իշխանության որով։

ԵՐԶԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԼԱՀՎԵՐ-  
ԴՈՒՅՑ.

ա) Ո Ճ Ո Ւ Ն (Ռւեռնլար) բարձրանալ  
Սահմանին կայարանից։ Տաճարը (գմբեթավոր  
բաղիլիկա՝ զբու յերեք կողմերից սյունա-  
դարդ, 726-735 թ. թ.) «Ամբատ Խոստավա-  
նողի» համարված գերեզմանը կոթողներով  
(որելիսկներ)։

բ) Ս ա ն ա հ ն ի վանքը (X դ.). բարձ-  
րանալ Ալլահվերդու պլատֆորմից։ Դերեդի  
կամուրջը։

Վանքի տաճարներն ու նախագավիթ-  
ները, մատենադարանը, Կյուրիկի Ա. և Դավիթ  
Անհողի դամբարանները։ Զաքարյանների  
դամբարանները։ Տուանորդու խաչքարը։

Սահմանի վանական գոլոցը։

գ) Հ ա ղ ա տ ի վ ա ն ք ը (X դ.),  
Բարձրանալ Հաղպատ կայարանից կամ անց-  
նել Սահմանին գյուղից ձորի գլխով։

«Համագասպը»։ Զանգակատանը։ Աղ-  
բյուրը։ Ա. Նշան խաչքարը։

Հաղպատի առաջնորդների գերը Բորչա-  
լուում և Թիֆլիսում։

դ) Կ ա յ ա ն Բ ե ր գ, Զորի զիլին,  
Հաղպատի և Սահմանի (Ալլահվերդու) միջև։  
Նրա գերը թաթարների արշավանքների  
ժամանակ։

յե) Ա. Խ թ ա լ ա յ ի վ ա ն ք ը (XIII դ.)  
Բարձրանալ համանուն կայարանից, վանքը  
վրակես հայկական և վրացական մշակութ-  
ների խաչաձևման վայրերից մեկը։

Վոչ-հեռու 4-րդ Խորհրդային անտեսու-  
թյուն այգեգործության, անասնաբուծարան։

Ոճուն, Սահմանին, Հաղպատ գյուղերի  
հողերը վորպես Լոռու գաշտի առանձին  
մասեր։

ԼՈՌՈՒ ԴԱԾՑ. Դաշտի կլիմայական ա-  
ռանձնահատկությունները։ Հողը։ Լոռեցու  
տիպը։ Ժողովրդական տունը «սողոմաշենք»  
և «գլխատուն»։ Տնտեսության ձեերը (անա-  
ռունը անտառներում արտօնացնելու հետե-  
վանքները, խողաքածություն)։ Կաթնա-  
տնտեսությունն ու մասնավրապես պանրա-

գործությունը: Թիֆլիսի մերձավորության  
ազգեցությունները:

Հայ, թուրք, և ռուս ազգությունների  
փոխարարերությունները:

ՍՅԵՓԱՆԱՎԱՆ (ն. Զալալ ողլի-1406  
մ. ծովի մակ.):

Սալուդի Սանահին կտմ Կալավերան  
կայարաններից, խճուղի-Ղարաբլիսայից (40  
կլմ.) Բղովդալի լեռնանցքով:

Վորպես և Ղարաբլիսա՝ ռուսական զո-  
րակայան նախկին սահմանագլխին: Այդ հան-  
գամանքի ազգեցությունը Ստեփանավանի  
պահի, տների ձեռքի և կենցաղի բնույթի  
վրա: Հարևան ռուս գաղութների ազգեցու-  
թյունը (այդ գաղութների դասավորության  
գերազանցորեն ռազմական նկատառություն):

Ստեփանավանը վորպես կլիմայական  
կայան: Ամարանոց:

Մանկատուն:

Կար ակալ, ա Արոտատեղային հարս-  
տութունները: Զիարուժարան: Անապնարու-  
ծարան. պանսագործարան (տեղական և  
շվեյցարական պանիրներ):

Լոռու (Տաշիր) անցյալը: Նախ-  
նական դարերի (մանավանդ բրոնզի դարի)  
մնացրդները: Կյուրիկյաններ և Զաքարյան-

ներ: Լոռի ամբողջը (Ստեփանավանից 5  
կլմ.):

Կալվածատիրական և ճորտական կար-  
գերը Լոռում: Գյուղացիական բռնկումները  
XIX դ.:

Հեղափոխական շարժումները: Հոկտեմ-  
բերյան հեղափոխության անդրադառնումը  
և լոռու գերը Հայաստանի և Վրաստանի  
խորհրդայնացման մեջ:

Թիֆլիս (Վրաստան):

Տես մարշրուտ № 1 (հավելված):

## № 11. ՂԱՐԱՔԻՍԱ-ԴԻԼԻՋԱՆ

Խճուղի 40 կլմ.

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ-տես մարշրուտ № 10:

ՀԱՄԶԱՉՈՒՄԱՆ լեռնանցքը: (1835 մ.)

Տանձուտի պղնձահանքը Լեռնանցքի յերկու  
կողմերի եջքերը Փամբակի և Դվալիի շղթա-  
ների միջև: Բուսական աշխարհի և զյուղա-  
տնտեսության վուգիսվելը բարձրության  
համեմատ: Վասկրեսենկա և Նիկիտինո մա-  
լականական գյուղերը (նրանց անտեսության  
և նիստ ու կացէ համեմատությունը Համ-  
զաչիմանի տնտեսության և նիստ ու կացի  
հիմ): Նիկիտենոյի թթու ջուրը:

Դիլիջան տես մարշրուտ № 2:

№ 12. ՂԱՐԱՔԼԻՍԱ-ՄԱՅՄԵԽ-ԴԱՐԱՁԻ-  
ԶԱԳ

Մեծ մասամբ լեռնային կածան.— 45 կմ.

ԴԱՐԱՔԼԻՍԱ. տես մարզուտ № 10:

Վանա ա ձոր, վերելք դեպի յայլաները:  
(Ալպան բուսականություն, քոչչորների  
կյանքը սարում):

Գիշերել սարվորների վրաններում: Ար-  
շալույտին վերելք Մայմե խ լեռնան գա-  
ղաթը (3085 մ.): Շրջակա լեռների պահո-  
րանա:

Եջք դեպի Միսխանի ձորը:

ԿՈՐՈՒԽԻՆԳՑՈՒԽԵՅ գյուղ ի խոսուց-  
ջուրցիների կոմունան: Հարևան գյու-  
ղերի վերաբերմունքը դեպի կոմունան: Պա-  
նրագործարան:

ԴԱՐԱՔՀԶԳԳ. տես մարզուտ № 3:

13. ՅԵԼԵՆՈՎԿԱ-ՆՈՐ ԲԱՅԱՁԵՏ-ՍԵԼԻՄ-  
ՔԵՇԻՇՔԵՆԴ-ՆՈՐԱՇԵՆ

Յելենովկայից մինչև Նոր-Բայազետ խճուղի  
37 կմ., Նոր-Բայազետից սայլուղի—Սելիմ—  
75 կմ., Սելիմցի-Քեշքընդ սայլուղի—36  
կմ., Քեշքինդից-Նորաշեն (յերկաթուղու-  
կայարան) խճուղի—55 կմ.:

Յելենովկա և Սելիմ լիձ տես մար-  
զուտ № 1:

Խճուղու ուղղությամբ—Որթաքլուի  
սեպագիր ուրձանագրությունները և Այրի-  
վանքի ճնությունները:

ՆՈՐ ԲԱՅԱՁԵՏ (1965 մ. ծովի մ.)

Քաղաքի հիմնադրման պատմությունը: Քա-  
ղաքի յերկրագործական տիպը: Պանրագոր-  
ծարան. ձկնասուրմարան:

Բանակումբ: Կոռոպերատիվի ցանցը  
գավառում և նրա աշխատանքները:

Աղմաղան շղթայի հրաբղխային  
կաղմությունը. նրա հանգած խառնարան-  
ները:

Վերելք Ղը գլուղ աղ (Կարմիր Քար—  
3340 մ.) կամ Մեծ Աղ-գաղ (3560 մ.)  
լեռների գագաթները՝ նրանց ստորոտում  
յայլաների վրաններում գիշերելուց հետո:  
Արշալույսին տեսարանը՝ դեպի Սելիմա լիճն  
ու Այրարատյան դաշտը:

Աղի աման գյուղն ու Աղիաման  
գետի ձորը: Սեպագրեր: Կուրգաններ:

Գյողալղարա շղթայի արտատեղները:  
Սելիմի Լեռնայնք (2432 մ.)

Քարվանսարատուն:  
Եջք դեպի Կոյթուր ջուրի ձորը: Այց  
Եղեղեգիսի (Ալագյազի) ավերակներին:

Վերելք Թեքե-Դոլդ արա ի գա-

գաթը (2897 մ.)—Դարալազյաղի լեռների  
պանորամա:

Բարձրադիր Դարալազյաղի անտառա-  
պահական ապագան:

Քեծինքինդ գավառականնոր կենտրոն:  
Յածրադիր Դարալազյաղի տնտեսու-  
թյունը: Այգեգործությունը կոռպելափախիլի  
ցանցը: Բանակումը:

Այց արձիճարձաթային հանքերին:  
Վերելը Դարալազյաղի պեղեցիլ  
պահպանված խառնարանը:

Աղավազ աձ որով գետի Արփա  
գյուղը. Ամազու վանք (XII դ.):

Արևելյան Արփաչայի ձորը: Բրնձե ա-  
գարակները: Անտառների վոչնչացման հասե-  
վանքները: Զրի աշխատանքը:

ՈՒՂԻԱ-ՆՈՐԱՇԵՆ Յեղ ԲԱՇ-ՆՈՐԱ-  
ՇԵՆ գյուղերը (Նախիջևանի հանրապետու-  
թյուն):

Շարուրի դաշտ: Արփաչայի նշանակու-  
թյունը դաշտի համար:

ՆՈՐԱՇԵՆ (յերկաթուղային կայա-  
բան) Յերևանից 91 կմ.:

---

№ 14. ԳՈՐԻՍ-ԼԱԶԻՆ ԳՐԱԴ-ՇՈՒՇԻ-ՍՏԵ-  
ՓԱՆԱԿԵՐՏ-ԱՂԴԱՄ-ՅԵՎԼԱԽ

Խճուղի մինչև Շուշի 98 կմ., Շուշուց Յեղ-  
լուի 115 կմ.

ԳՈՐԻՍ: Զանգեզուր գավառի կենտրոն:  
Հին և նոր քաղաքամասեր: Այրեր:

Յերկրաբանական կազմությունը: Լեռ-  
նալանջերի ձևերը: Զինքիլներ:

Տեղական յերկրագործությունը: Այգե-  
գործությունը: Հանքային հարստություն-  
ները:

Հանգստայան տուն: Արհմիութենական  
ակումբ:

Հայ և թուրք ազգությունների փոխ-  
հարաբերությունը առաջ և այժմ:

Վերելը Քորիսի-Ջրի կիրճով: Թթու  
ջրի աղբյուրներ: Տեղի անտառապուրի բար-  
ձրավանդակը (Նրա հողը) և Տեղ գյուղը:  
Գյուղի այրերը և նրանց ոպտագործումը  
տնտեսական նպատակներով: Յերթեկու-  
թյան դժվարությունը անձրեային յեղա-  
ակներին:

ԶԱՅՈՒԿ, ԳՅՈՒԿԸ և Զաբուղ ու Հակաբի  
գետերի խառնուրդի լեռնանցքը: (Տեսարան  
գեղի յերկու գետերի ձորերը):

ԼԱԶԻՆ ԳՐԱԴ (Ն. Ալլալար): — Լեռնային

Քյուրդիստանի կենտրոն։ Անասնապահության տեղը Քյուրդիստանի անտեսության մեջ։ Մերձկասպյան քոչվորների այստեղ սար բարձրանալը։ Քյուրդերի վորտեղից գաղթելը։ Թուրքական կենցաղի լեզվի, աղդեցությունը նրանց վրա։

ԼՀԻՍՍԳՈՐԻ կամ ԿԱԼԱԴԱՐԱԾԻ լեռնանցքը Սարը-Բարս և Սաքսաղան լեռների միջև (2075 մ.)։ Թթու և այլ հանքային ջրեր, Կարվանատուն։

ՇՈՒՇԻ (1403 մ.), Մուտք Յերմանի դռնով։

Շուշու սարահարթը, նրան պատող ձորերը (Քարին-տակ), տեսարաններ ձորագլուխներից։

Շուշին վորպես Շուշվա գավառի նախկին կենտրոն։ Շուշու «Ղալայի» հիմնավորությունն ուրով, նրա ուղղմական նշանակությունը։ Զարգացումը ուժական տիրտապեթյան ժամանակ։

Շուշին վորպես մանր արհեստների և ապրանքափոխության վայր կեռնային Քյուրդիստանի ազգարնակության, մանավանդ քոչվոր անտառնապահների հետ։

Շուշին վորպես զարարազցի կապիտալիստների ամարանոց և վորպես հայ մտավորական կենտրոններից մեկը։

Շուշու ավերումը ազգամիջյան կոիվսերի հետեւանքով։ Խորհրդային իշխանության ջանքերը ազգային շփումները վերացնելու և Շուշու անտեսությունը վերականգնելու։ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ (հախկին Խանքենդի)՝ եղք զիկզակներով Շուշու սարահարթից (Գանձակի դռնով)՝ 891 մ. ծովի մական։

Նախկին զորանոց-բանակատեղի։ Լեռնային կրիմայական կայան։

Մտեփանակերտը վորպես ինքնավար Ղարաբաղի մայրաքաղաք։ Զարգացումը Խորհրդային իշխանության որով։

Շերամաղանությունն ու ողեհանությունը Ղարաբաղում։ Այց մերձավոր բոժոժի գործարաններին, բանվորների աշխատանքը այդ գործարաններում։

ԽՈՉԱԼՈՒԻ-ի հովիտը—բրոնզե դարի մարդու կայան (տեղական կուրդանները)։

Ա.ՍԿԱՐԱՆ. Ամրոցը նրա կառուցման պատմությունը։ Գարգար գետի յերկու ափերի ամրությունները։

ԱՂԻԱՄ (350 մ.)—Աղրբեջան։ Աղդամին ու շըջապատող այգիները, վորոնց մեջ տեղափորված են մոտ 20 գյուղեր։ Գարգար և Խաչեն գետերի նշանակությունը այդ շրջանի համար, Աղդամը վորպես Դաշտային Ղարաբաղի բնորոշ կետերից

մեկը: Այսկեզործություն (ողե գործարան),  
շերտամապահություն, բանջարաբուծություն:  
Բամբակարուծության զարգացումը:

Աղդամի տնտեսական կապը Գարգար և  
Խաչեն գետերի լինային ավաղանների  
հետ: Աղդամի շուէկան և տոնավաճառը:

ԲԱՐԴԱ (նախկին Պարտավ):

Անց Թարթառ գետի «Հին» (մինչև  
1843 թ. յերկրաշարժը) և «Նոր» հուներով:  
Վայրենացած այգիներ:

Բարդայի ընդարձակ այդիները: Պար-  
տավի պատմական նշանակությունը արա-  
րական տիրապետության ժամանակ (ամի-  
րայանիստ քաղաք. վերջ Դվինից Փռքը Կով-  
կասի վրայով անցնող մեծ ճանապարհի և  
յելակետ Մեծ Կովկասի վրայով գեղի Դեր-  
բենդ և Ստորին Վոլգայի ափերը ձգվող ճա-  
նապարհի):

ՅԵՎԼԱԽ (յերկաթուղու կայարան):

1-3 կլմ. Կուրից հեռու: Կուրի վարար-  
ման՝ տարածությունը:

Դաշտային Ղարաբաղը՝ գեռ նորերս ծո-  
վի հատակ:

Անասնապահությունը Դաշտային Ղա-  
րաբաղում:

## 15. ԳՈՐԻՍ-ՂԱՅՐԱՐ-ՄԵՂՐԻ-ՈՐԴՈՒՔԱՏ- ԶՈՒԼՑԱ

Գորիսից մինչև Տաթև լեռնային կածան՝ 18  
կլմ., Տաթևից մինչև Ղաթար՝ 30 կլմ., Ղա-  
թարից մինչև Մեղրի՝ 60 կլմ., Մեղրիից  
մինչև Որդուքատ կածան՝ 26 կլմ., Որդու-  
քատից մինչև Զուլֆա խճուղի՝ 48 կլմ.,  
(Զուլֆայից մինչև Յերևան յերկաթուղի  
203 կլմ.):

Դիտել թե ինչ փոփոխություններ են  
մտել Զանգեզուրի զյուղերում Բագու և այլ  
վայրերը աշխատանքի գնացողների միջոցով:  
ԳՈՐԻՍ-ԶՈՒԼՑԱ մարզուտ № 14.

Ուչթափալարի սարահարթը (Շ ն հ ե ր  
և Խ ո ր գյուղերի այգիները ճանապարհի  
ձախի կողմում): Ս ա տ ա ն ի կամուրջը  
Բաղար-Հայի վրա: (Թթու ջուր):

ՏԱԹԵՎ: Տաթև գյուղի տնտեսությունը:  
Տաթևի վանքը: Նրա կուլտուրական դե-  
րը միջին դարերում: Նրա կալվածքները.  
զյուղացիական շարժումները նրա կալ-  
վածքներում:

Տաթևի սյունը՝ «Գավաղան»:  
Տաթևին հարևան հողությունները:  
Դեղի Ղաթարի հանքերը Ե ջ ա ն ա կ-  
չայ գետով: Զանգեզուրի լեռների յերկրա-

բանական կազմությունը, Անտառային հա-  
լատությունները: Ծառերի տեսակները:

ԿՈՐՄԻՐ ՆՈՅԵՄԵՐԻ (ՂԱԹԱՐԻ)

պղնձահանքերը:

Ընկ. Լինինի, ընկ. Շահումյանի ան-  
վան և այլ հանքերը, Պղնձի պաշարը, Հան-  
քի պարունակությունը: Հալոցքներ, գործա-  
րան, Արտադրանքի փոխազբության պայ-  
մանները: Բագու-Հուլֆայի կառուցվող յեր-  
կաթուղու նշանակությունը:

Բանվորների թիվը, ծագումը, հասակը,  
ստամբը: Աշխատանքի պայմանները: Կենցա-  
ղային պայմանները: Բանակումբը և «Կար-  
միր անկուններ»: Բանկոստ:

Բանվորության ազգեցությունը գյու-  
ղական կյանքի փրկուսության վրա:

Գործարանի շնորհիվ գալառ մտնող  
կապիտալի քանակը:

ՈԽՃԻ-ԶԱՅԻ ձորով մինչև ՈՒճի  
գյուղը:

Հալիքորի ամրոցը: Կեռաթաղի հին կա-  
մուրջը Ոխճի գետի վրա և նրան պաշտպա-  
նող «Եսկանդար» (Քաղաքերդ) ամրոցը:  
Ոխճի—վորակա այն գետը, վորտեղից մի քա-  
նի ուղիներ Ալանգաղի յայլաներն են տա-  
նում քոչվորներին, այդ ուղիներից մի քա-

նիոը անցնում են շղթայի մյուս կողմը՝  
Որդուբատ:

Վերելք դեպի Դիքի բաքլուի լեռ-  
նանցքը: (Փիրգավան-մահմեդական սրա-  
վայրը քոչվորների ճամփին):

Տեսարան լեռնանցքից՝ հարավ մինչև  
Արաքս, արևմուտք դեպի Ալանդյաղի ձյու-  
նավատ գագաթներն, արևելք դեպի Խուս-  
տուփի լյառը: (Խուստուփի պաշտամունքը),

Եջք դեպի Մեղրիի գալառը:  
ՏԱՇՏՈՒՆ և ԼիճՔ. Մեղրի գետի ա-  
վազանի վերին գոտու բուսականությունն  
ու մշակույթը:

Մեղրի գետի ձորը նեղ—մինչև Լեհ-  
կաղ և լայնացող մինչև Յովհաննու  
վանքը:

Այց Լիշ կվաղին՝ տիպար ցածրա-  
գիր գյուղերի ամարանոցի: (Կյանքը Կյվան-  
ներում և գրաններում):

ՄԵՂՐԻ վորպես զավառի կենտրոն:  
Մաջթաղ և Պստիկթաղ: Մաջթաղի աշ-  
տարակները: Շրջակա լերկ ժայռերը:

Արհեստական վոռոգումը: (ասուները  
բարձր լեռնալանջերին): Այգիների զասա-  
վորությունը: (Մեղրու գինին): Շերամապա-  
նություն (սերմանաններ): բամբակարուծու-  
թյուն: Հողամշակության ինտենսիվ ձևերը:

Գրագիտության տարածումը, գրա ազդեցությունը տնտեսության վրա:

Մեղրին վորպես փակ շրջանի կուլտուրական կենտրոն: Նրա բարբառը:

Մեղրու կոտպերատիվը վորպես չայաստանի ժամանակով առաջին կոտպերատիվը. (25-ամյակի տոնակատարությունը):

Մեղրին վորպես կարեռը վայր Ղարաբաղից-Թավլրից տանող ճանապարհի վրա:

Ավանդություններ պարուկական խաների տիրապետության ժամանակներից, Մեղրու «համայնքը» Ռուսական տիրապետության հաստատումը և սուս չինովնիկությունը հեռավոր գավառում:

Խորհրդային իշխանության ձեռք առած միջոցները գավառի տնտեսությունն ու հասարակական և կրթական գործը բարձրացնելու: Կարձեանի տոռուն:

Մեղրիի բնակչության լիշկապ տեղափոխվելը և միայն սակավաթիվ տղամարդկանց տեղում մալը ամառվա ամիսներին:

ԱՐԱՔՍԻ ԶՈՒԾԻ: Մեղրուց դեպի Որդուրատ:—Արաքս գետի կիրճը: Բազու-Զուրֆյան յերկաթուղու չափարտված գիծը: (Նախկին լեռնային կածանի մասցըները), Կուրի սահանքները: Նան-զաշ Շիրճի յերկ-

իարանական կտղմությունը (մարմարեցի բարի):

ՈՐԴՈՒԿԱԾ (Աղբյիջան: 948 մ.):  
Տեսարան և Ստեփանոս (նախկին ամբոցի) ըլլի վրայից:

Որդուրատի այգիները և շուկան: Որդուրատը վորպես շերամապահական կենտրոն: Մետաքսի թել քաշելու և թել վոլորելու գործարանները:

1000-ամյա չինարը: Հին Քարվանատան ավերակները և գետի մեծ մեջիգը յեղած ստորյերկրյա անցքը:

Այց Վերին Ագուլիսին: Հայթուրքական փոխարարելությունը Խորհրդային իշխանության որով:

Վ. Ա.Ջ. զյուղը: Նրա այգեգործություն հակաղության վոռոգվող և անջնուր վայրին:

ԶՈՒԼՅԱ (յերկաթուղու կայարան):

Նոր զարգացող քաղաք պարսկական սահմանագլխին՝ գլխավոր հանգույց Միության և Պարսկաստանի առևտրի (Թավլրիդի յերկաթուղու սկզբնավորությունը մյուս ափին): Արաքսի տեսարանը:

Այց Հին Զուղա: (Գերեզմանատուն):

Ա Հայոց առաջնորդութիւն Ամերիկ  
Աստվածայի պարագ բազմութիւն ուն  
է առ և պարզած պահանջ աշխարհական  
-Այս թիւ պահանջ պատճենացած և առաջ  
առ ունի Վայովանքը ուղարկած և Ա  
ուղարկած հայոց և այս  
Ա Հայոց առաջնորդութիւն Ամերիկ

## ՀԱՎԵԼՎԱԾ

№ 1. ԹԻՖԼԻՍ—(ԲՈՐՃՈՐ)—ԲԱԹՈՒՄ  
 (359 կմ.)

Երավլիս (404 մ. ծովի մականի):  
Վրաստանի Ս. Խ. Հանքապետության և  
Անդրկովկասյան Գեղերացիայի մայրաքա-  
ղաք:

Յերկաթուղիների հանդուցյալ 1) դեպի  
Բաթում, 2) գեպի Բագռու, 3) գեպի Յերե-  
վան—Զուլֆա և 4) գեպի Թելավ։ Յելակետ  
բազմաթիվ հճուղիների, մասնավորապես  
Ռադմավիրական հանապարհի։

Թիվը առաջնային տեսարանները — յերկաթուղու գծեց, Արսենալի (Զբնանոցի) մոտից, Մամա Դավիթի (Փոսէնիկուլեր) և Սոլոլակի առլեզից, Վերայի և Նիկոլայևկի կամուրջներից:

Զբոսանք՝ Ռուսթավելու պրոտեկտության  
(Ռահիրային թատրոն, Ռուսթավելու ան-  
վան թատրոն, Անդրկուսկոմ, Բանվորական

պալատ, նախկին ուսղմապատմական թանդարան, վրաստանի թանգարան,—Պալատ (Փեղերացիայի և Վրաստանի բարձրագույն հաստատություններ) —Կոմինտերնի (նախկին Դփոցավայա) փողոց —Ազատության (նախկին Յերեանյան) հրապարակ (Գալքաղողծկոմ, քարվանսարա. ելեքտրաքարշաների գլխավոր հանգույց) —Միջի փողոց (հին քաղաքի դարպաս, ն. Վելյամինյան՝ Դումբարձեյի և Պաշկինյան փողոցները՝ հին քաղաքի խրամատ). —Եքսարքի հրապարակ—Նախկին «Սալաղո»—«Ժողովարանի» հրապարակ. վրաց թագավորների և կաթողիկոսների տների տեղեր, Սիոնի ռածար (եկեղեցական թանգարանով) —Մուլի շարք Թուրքի մայդան—(Ս. Գեորգի Կաթողիկեյի եկեղեցին Սայաթ Նովա աշուղի գերեզմանով. մեջիներ. ծծումբի բաղանիքներ) —Հավլաբարի կամուրջ—Գինու վերելք, Մետեխի ամրոցը, տեսարան դեպի Սոլոլակի սարի՝ «Կալայի» ամրոցները և Խարբուխի թաղը. Թիֆլիսի գինու նկուղ գոմեշե ոռւմբերով) —Հավլաբարի հրապարակ (այց Խոջիվանքի գերեզմանատանը—Գ. Արծրունու, Շափփու Զ. Աղայանի, Հով. Թումանյանի, Ծերենցի, Ա. Ծատուրյանի Արշ, Զոհրաբյանի և այլ գրական ու հասարակական գործիչների գե-

րեզմաններին) —Ցիցիանովի վերելք—18 փետրվարի փողոց (Սաղ. Կուրի վրայի ջաղացները) —Պլեխանովի պլուսպեկտ—(գիտարանորսներվառապերիա) —Մուշտայիդ (Շերամապահական թանգարան):

Զբոսանք-Ֆունիկուլերով, (այց Գրիբոյեդովի և Ճավճավաձեյի գերեզմաններին. արհեստական անտառ):

Զբոսանք՝ Բոտանիկական այգի: Նրա գիտական նշանակությունը: Լարորատարիաներ: (Մանել Սոլոլակի տոնելով և յենել ամրոցի գոնով. եջք՝ Եկեղեցների սանդուխքներով: Հին քաղաքի տեսարան):

Յերկաթուղային դեպո: Տրամվայի գեպո: Դեպոների բանվորների մասնակցությունը հեղափոխական շարժումներին:

Թիֆլիսի արդյունագործությունը, Նրա գործարանները (ծխախոտի, ձեթոճառի, կաշվի, մեխանիկական, ալյուրի և այլն) գործարանների տեղագրական գասավորությունը:

Բանվորների թիվը Թիֆլիսում: Բանվորական կազմակերպությունները: Բանակումբներ, բանթատրոններ):

Թիֆլիսը՝ վորպես առևտրական կենտրոն, նրա կասը Միության այլ անտեսական կենտրոնների հետ:

Թիֆլիսը վորակես մտավոր կենտրոն.  
Վրաստանի Համալսարանն ու Ազգագրական  
Թանգարանը (Ծղնեթի փողոց), Պոլիտեխնի-  
կում (Զինանոցի մոտ, Նախկին Ներսիսյան  
դպրոցի շենք), Անդրկով. Կոմունիստական  
Համալսարան, Գեղարվեստի ճեմարան (Գրի-  
բոյենդովի փողոց), Վրաց արվեստի տուն  
(Մաշաբեկու փողոց), Հայ արվեստի տուն  
(Տրոցկու փողոց): „Յարձ Յասուկան կամ-  
քրագարան (ն. Ալեքսանդրյան այգում):

Թիֆլիսը վորակես բանեռողջիական կա-  
յարան. Նրա բազանիքների հարմարացումը  
բժշկական նպատակներին: Թիֆլիսի հիվան-  
դանոցները:

Կոռուպերացիան Թիֆլիսում, նրա ցանցը  
Վրաստանում:

Պրոֆեսորնալ կազմակերպությունները:  
Բանվորների թվի աճումը Թիֆլիսում  
XIX-դ յերկրորդ կիսից: Բանվորական առա-  
ջին յելույթները: Թիֆլիսի բանվորությունն  
և 1905 թ. ու 1917 թվի հեղափոխություն-  
ները: Հոկտեմբերյան հեղափոխությունն ու  
Թիֆլիսի բանվորությունը. Թիֆլիսի գերը  
Անդրկովկասյան հեղափոխական շարժում-  
ների մեջ: Թիֆլիսի կուսակցական կազմա-  
կերպությունները:

— 50 —

Թիֆլիսի անցյալը: Թիֆլիսը XIX-դ.  
սկզբում և նրա աճումն ու կրած փոփո-  
խությունները հաջորդ շրջանում: Թաղաքի-  
բարեկարգությունը Խորհրդային իշխանու-  
թյան որով, «Հին Թիֆլիսի» ցուցահանդեսը  
(Լենինի փողոց):

Եքսկուրսիա Զարդ և ա (տես հավելված  
մաշրուտ № 3):

ՄՅԱՅԻՑ և տես հավելված մարշրուտ № 3:  
ԳՈՐԻ:

Լյախիվա գետի ավագանի այգեգործա-  
կան կենարոն: Յելք Լյախիվա գետի հովտից:  
Այլաքաղաք «Ռովլիս-Ցիւն»:

ԽԱՇՈՒՐԻ (ն. Միխայլով):  
Կուրի մուտքը գետի իր միջին ավագանը  
Բորժոմի կիրճով: Եքսկուրսիա Բորժոմ յեր-  
կաթուղագծով (30 կմ.):

ԲՈՐԺՈՄ (800 մ. ծովի մակերածույթից)  
Անտառների ճոխությունը: Բորժոմը  
վորպես կուրորտ իր կլիմայական պայման-  
ների և հանքային ջրերի շնորհիվ: Փայտի  
(տախտակի) և շիկուաններ: Հանքա-  
յին ջրերի ածարան: Սանատորիաներ: Լի-  
կանի պալատը:

Զբոսանք՝ յոթը կամուրջներից գենը և  
Վորոնցովի սարահարթը:  
Ցարական յեղոր՝ Միխայիլ Նիկոլայի-

— 51 —

վիչի կատարած կալվածագրավումները: Բոր-  
ժոմի վորսը: «Փօխարքայի տան ժամանցը»:  
Հեղափոխական շարժումները և Բոր-  
ժոմի բանվորությունը:

ԲԱԿՈՒՄԻՐԻ ԱՆԴԻ ՆԵՐԱԿԻՄՈՒՄ (38 կմ.)

Ջբոսանք — լեռնային յերկաթուղիով  
Յագ-վերի, Ցիմի ամարանոցները, հան-  
գոսյան տները: Տեսարան գեպի «Հմույ-  
քի հովիտը», Բակուրիանի-վորպես բարձր  
լեռնային կլիմայական կայան: (1663 մ.):  
Նրա բուսականության խիստ տարբերու-  
թյունը Բորժոմի բուսականությունից:

ՎԵՐԵԼՎ-ՑԽՐԱ-ԾՂԱՐՈ լեռան գագա-  
թը արշալույս դիտելու համար:

ԿԱՇՈՒԿՐՈՒՑ ԴԵՊԻ ԲԱԹՈՒՄ. Սուրամի  
տունել (4 կմ.): Եջք դեպի Արևմայան Վը-  
րաստան: Սև ծովի մերձավորության նշան-  
ներ: Անտառների ճոխություն:

ՇՈՐԱՎԳԱՆ կայանից յերկաթուղու  
ճյուղ գեպի Ճի աթուրի (43 կմ.) մար-  
գանեցի հանքերը (պաշարը՝ մոտ 200 մի-  
լիոն տոնն):

ՌԻՌՆ կայարանից յերկաթուղու ճյուղ  
գեպի Քութ այիս (9 կմ.): Խորհրդային  
իշխանության որով կառուցված տոռն,  
նաև մանուղի գործարան: Մերձակայքում  
Մոծամեթի և Գելաթի վանքեր:

Ճյուղի ծայրին (53 կմ.): Տղի ի բա-  
րի ածխահանքը:  
ՍԱՄՏՐԵԴԻՒՅՑ ճյուղ կեպի Փոթի նա-  
վահանգիստը:

ԶԱԿՎԱ. Աջարստանի թիյի մշակույթի  
կենտրոնը (1925 թ. 1000 հաբատար): Թիյի գոր-  
ծարան: Բամբուկի արհեստանոց: Նարինջի և  
կիտրոնի պուրակներ:

ԲԱԹՈՒՄԻ ԲՈՏԱՆԻԿԱԿԱՆ ԱՅֆին (67  
հեկտ.) յերկապնդի բուլոր մերձարեագարձա-  
յին յերկների բույսերով (հիմնագիր պրոֆ.  
Կրամնովի գերեզմանը):

Բաթումի շրջակայքի հողը, բուսակա-  
նությունն և կենդանական աշխարհը: Տե-  
ղական պայմանների ազդեցությունը ազգա-  
րնակության կենցաղի վրա:

Բաթում (3 մ. ծովի մակերեսույթից):  
կենտրոն Աջարստանի հանրապետության:

Բաթումը վորպես կլիմայական կա-  
յարան թոքերի կամ սրտի հիվանդություն  
կամ վոսկորացավ ունեցողների համար. Նրա  
ծովային լողարանը՝ պատճը:

Տեսարան Բաթումի զրոսարանից (բուլ-  
վարից), մանավանդ վերջալույսին:

Բաթումի նավահանգիստը (նավթի և  
մարգանեցի արտահանությունը): Բագվի  
նավթ մուղի յելքը: Բաթումի նշանակու-

թյունը Անդրկովկասի տհտեսական կյանքի  
համար:

Բաթումը համաշխարհային պատերազ-  
մի և քաղաքացիական կոկվների ժամանակ:  
Հեղափոխական շարժումները Բաթումում:

Զրոսանքներ նավակով և յերկաթու-  
ղով գեղի Մախինջառութիւն, Կանաչ  
հրանդանը, (Բոտանիկական  
այգին, Զակված) Ճիխիս-Ճիրի,  
Կոբուլեթի:

## № 2. ԹԻՖԼԻՍ—ԲԱԳՈՒ

549 կմ.

ԹԻՖԼԻՍ

Տես նախորդ, № 1 մարշրուտը:

ԴԱՐԱՅԱԶԻ տափը. նրա վոռոպումը և  
բերքը:

ԱՂՍՏԱՋԱ. Խճուղի գեղի Դիլիջան:  
Տես մարշրուտ № 2

ԳԱՆԴԱ. (442 մ. ծովի մակ.) (Գանձակ,  
Նախկին Յելիզավետպոլ):

Թուրքական և հայկական թաղեր:  
Շրջանի կենտրոն: Գործարանային  
կյանքի զարգացումը Խորհրդային իշխա-  
նության որով: (Նոր կառուցվող տեքստիլ  
գործարանը): Շրջակա գյուղերի արտադրու-

թյունն և նրա վրա հիմնված քաղաքային  
արդյունագործությունը:

Գանջան վորպես Ազրբիջանի յերկրութ  
կուլտուրական մեծ կենտրոն:

Գանջայի պատմական անցյալը: Խա-  
նաթյունն և նրա միացումը ուստական պե-  
տության հետ:

ՅԵՎԼԱԽ կայարան: Խճուղի գեղի Շու-  
շի և Գորիս տես մարշրուտ № 14.

Յերկաթուղու վագոնից տեսարաններ  
գեղի Մեծ Կովկասի և Փոքր Կովկասի (Շահ-  
գաղ, Գինալ, Գիւմիշ, Մոավ զարդաթները):  
ՉՊԹՄՆԿՐԸ:

ԲԱԳՈՒ (2 մ. ծովի մակ.)

Ազրբիջանի Ա. Խ. Հանրապետության  
մայրաքաղաք:

Բագուի հին (ամրոցի պարիսպների  
մեջ) և նոր, յելլուպական մասերը: Պտույտ  
կոմունաների փոքրցով, և ծովափով. 26  
կոմունաների այգին և արձանը:

Ժողկոմիուրն, Բագիսորհուրդ, Թյուրքա-  
կան կուլտուրայի պալատ: Խանի պալատը:  
«Աղջկա աշտարակը»:

Յելեքտրաքարշը և նրա պարկը:  
Շալարի ջրմուղը:  
Բագուն վորպես Ա. պշարունական  
նավթային զրջանի կենտրոն:

Նավթի արդյունաբերությունը, Բարսի անի և Սարունչի, Բիբի և Ելբատ և այլ նավթարեր վայրերը, Նավթ համելու յեղանակները, Նավթի շատրվան, Նավթագագիչ գործարանները Սկ և Սպիտակ քաղաքներում: Յելեկտրակայան: Նավթամբարներ: Փոխադրության յեղանակները — ցիստերներ և բազու- բաթումի նավթմուզը:

Նավթի արտադրությունը պատերազմից առաջ և այժմ: Արտադրության և արտահանության կինարոսուացումը — Խորհրդային իշխանության որով: Բագվի նավթի տեղը համաշխարհային շուկայում:

Բագվի բանվորությունը: Նրա աղջային կազմը: Կազմակերպությունները: Բանվորական շինարարությունը (բանվորական քաղաք): Քաղուսավորությունը (ակումբներ, դրադարաններ, կարմիր անկյուններ, բարձրախոսներ):

Բագվի բանվորության դերը ոռոսական և անդրկովկասյան հեղափոխական շարժումների մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունն և Բագվի բանվորությունը:

Նավթի արդյունաբերության հետ կապված գործարանները (մեխանիկական, մագվեռլային և այլն):

Լենինի անվան մանվածագործարան: Ալպակու, ծխախոտի, մետաքսաման և այլ գործարանները:

Բագուն վորպես առևտրական կենտրոն: Նրա կապը Հաշտարիսանի, Անդրկասպյան յերկրի և Պարսկաստանի հետ: Նրա նավահանգստի նշանակությունը Անդրկովկասի համար: Տօնավաճառը:

Կոռուպեցիան Բագվում և Նրա ցանցը Ազրբեջանում:

Պրֆեսիոնալ կազմակերպությունները: Բագուն՝ Ազրբեջանի կուլտուրական կենտրոն: Համալսարան, Պոլիտեխնիկական ինստիտուտ, Կոնսերվատորիա, բանֆակներ տեխնիկումներ: Գրքի կոլեկտոր և գրադարաններ: Թատրոններ: Կանանց կրթության գարգացումը թյուրք ազգաբնակության մեջ. «Կորչի չաղրան»: Լատինական այբուբենը: Այց „Բակինսկий Ռաբочий“ թերթի տպարանին:

Ազգությունների փոխարարերությունները ցարական շրջանում և Խորհուրդների որով:

Իմպերիալիստական միջամտությունը համաշխարհային պատերազմի ժամանակ: 26 կոմունարների սպանությանը:

Բագվի անցյալը:

Այս «Կրակապաշտների տաճարին»  
Մուրախ իւ անում:  
Զբոսանք ծովով:

### № 3. ԹԻՖԼԻՍ—ՎԼԱՂԻԿԱՎԿԱՍ

Թաղմավիրական խճուղի—213 կլմ. հին  
«Դուռն Ալանաց» (Դարիալ) կիրճով՝ Կասուց-  
ված և ոռուական տիրապետության Անդըր-  
կովկասում հաստատվելուց հետո: Խճուղեցի-  
նության տեխնիկայի նշանավոր գործ: Թու-  
սաստանի և Անդրկովկասի հաղորդակցու-  
թյան զլիսավոր գիծը մինչև Բագու—Պետ-  
րովսկ—Վլաղիկավկասի յերկաթուղու կա-  
ռուցումը: Նրա նշանակության բարձրանա-  
լը ավտոմորիլային յերթեկության զարգա-  
նալուց հետո: Լեռնահատ (պերեալինայ)  
յերկաթուղու կառուցման նախագծերը:  
Թիֆլիս (404 ծովի մակ.):

Տես հավելված մարզուտ № 1:  
ԶԱԴԻԾ—«Վերին Ավճալայի հիդրո-  
էլեկտրական կայան»:

Առուն, թումբը, մեքենաները (36,000  
ձիառութի հաշվով. 137 միլիոն կիլոտուատ—  
ժամի արտադրականությամբ): Լենինի ար-  
ձանը: Բանվորական շնորհերը. Կյանքը բան-  
վորական թաղում:

**ՄՅԱՀԵԺ.**  
Վրաստանի հին մայրաքաղաք:  
«Ծվեթիս—Յիսովելի» տաճարը (XV-ր.):  
«Սամթավրո», «Զլարիս—Մամա»:  
Արագվայի և Կուրի գետախառնուրդը:  
ԱՐԱԳՎԱՅԻ աշակով Մուխրանի դաշ-  
տով գեղի Ծիլկ անի, ապա Բազալիթի  
լեռնանցքով (տեսարան գեղի Բազալիթու-  
թակը) դեպի Դուշեթի կայարանը (տե-  
սարան գեղի Դուշեթ քաղաքը՝ Արագվայի  
«Երիսթավիլերի»—Նախարարների նստա-  
վայրը) մինչև Անանուր:

ԱՆԱՆՈՒՐ Արագվայի «Երիսթավիլերի»  
ամրոցը ատամնավոր պարիսպներով, աշ-  
տարակներով և հին ու նոր յեկեղեցիներով:  
Մթիուլիթի հովտով գեղի ՓԱՍԱՆԱ-  
ՌԻՐ Մեծ Արագվայի ափով (Սև և Սպիտակ  
Արագվաների գետախառնուրդը՝ կայարանին  
մի կիլոմետր չը հասած): Հովտի գյուղա-  
ցիական տները իրենց յերկթեք տանիքնե-  
րով. նրանց տարբերությունը Մուխրանի  
գաշտի տներից: Տնտեսության ձևերի փո-  
փոխվելը (800 մետրից վեր չը կան խաղո-  
ղի այգիներ): Անտառների շրջան: Պահնոր-  
դական դիտողական աշտարակներ, վորտե-  
ղից հսում հսկում եին «հյուսիսական» ժո-  
ղովուրդների շարժումներին:

Փասանառութը վորպես վարչական կեն-  
տրոն և կլիմայական կայան (ամարանոց,  
1.014 մ.):

Սպիտակ Արագվայի ափով դեպի  
Մ և թ (1.412 մ.) և վերելք դեպի Գու-  
դառութ Մթիուների զյուղերը, Բուսա-  
կանության արագ ձեսափոփոխելը:

ԳՈՒԴԱՐԵՐ (2.157 մ. ծովի մակ.)

Բարձր լեռնային գոտի. բարձր ալպյան  
բուսականություն: Տեսարաններ արշալու-  
սին և վերջալույսին, լեռնային փոթորկի  
ժամանակի: Պանորամա-կայարանից վոչ հե-  
ռու գտնվող հրապարակից (ձորագլխից):

ԵՔՍԿՈՒԽԻՐՍԻԱՆԵՐ Գուտառութից.

1. Դեպի Կել լիճը Սպիտակ Արագվայի  
հովտով և դեպի Խատի-Սոփելի զյու-  
ղը.

2) Վերելք: Արլս-Կելի սարահարթի շղթ-  
թան.

3) Վերելք Խաչի-լեռն և Գուղդ-լեռը.

4) Կառշապութի գյուղով Խեղիս-խեղի  
կիրճով դեպի Թվիշեթի զյուղը:

Խճուղով դեպի Զբբաժան շղթայի Խ-  
չի-Լեռն անցքը (2.345 մ.) Տեսարան՝  
հյուսիս-արևմուտքում դեպի Խորիս առ  
լեռը, արևմուտքում դեպի Նեփիս-կալո հրա-  
բուղիք, հյուսիս-արևելքում դեպի Սաձե-

լի գագաթը և հալավ-արևելքում դեպի  
Գուդառուղիների խումբը:

Եջը Բայդար գետակի ուղղությամբ  
դեպի ԿՈՒՅԻ Թերեք գետի ափին: Սարբա-  
վորութիւնը ձյունի և հողի փլութիւնից  
խճուղին պաշտպանելու համար: Ցըլքարա-  
նական կազմությունը: Թթու ալյուրներ:

Եքսկուրսիա Կորի կայարանից Տ ը ու-  
ս ի կիրճով գետի Կազբեկից իջնող Սիվե-  
րառութ և Զիլգա-խոսի սահցարանները, վո-  
րոնց տակից սկիզբ և առնում Թերեք գետը:

Թերեք գետի կիրճով գետի հյուսիս:  
Սիսնի ամրոցը աշտարակով և հին յե-  
կեղեցով. միակ պուրակը:

ԿԱԶԲԵԿ կայարան (1700 մ.)

«Ստեփան Շմինդա» գյուղը Հին ավա-  
տական տան ամրոցը: Նրա նշանակությու-  
նը հնում կիրճը թշնամիներից պաշտպանե-  
լու համար: Վրացական գյուղերը Կորիից  
մինչև Ցիլլառութի զյուղը (Լարսին 11 կմ.  
չը հասած), ոսական գյուղերի մեջ բնեա-  
ված: Լեռնային զյուղերի ինքնորինակ տի-  
պը: Աշտարակներ՝ գյուղի (տոհմի) պաշտ-  
պանության համար:

Պղնձի, լեռնային բյուրեղի և այլ հան-  
քեր:

Կողմնակի շղթայի (մինչև կարս) յեր-  
կրաբանական կազմությունը,  
Եթէկոյի ՍիԱՆԵՐ.

1) Դեպի Դեգորակի սառցարանը:  
2) Վերելք Կազբեկի գագաթը. (5046 մ.)  
Դեգորակի սառցարանի տնակից: Կազբեկի  
յերկրաբանական կազմությունը: Տեսարան-  
ներ դեպի Ելբրուս, Շխարա, Դըխտառ,  
Կոշտանտառ և Զանդի-տառ:

3) Դեպի Գերգեթի, կամ Ործվերիի  
սառցարանը.

4) Դեպի Արանո սառցարանը.

5) Վերելք Կուրու լեռան գագաթը.

6) Ծմինդա-Մամերա («Սուրբ յերրոր-  
դություն») վանքը, վորտեղ և վորի մեր-  
ձափոր այրերում վտանգի ժամանակ պա-  
տապարվում ելին նաև Մցխեթի միաբան-  
ները աճարի հարստություններով:

ԴԱԲԻԱԼԻ Կիրճը:—Խճուղին Կողմնակի  
շղթայի ճեղքի ժայռոտ դիք լանջին, հետո  
Թերեքի անդունի կողքով. Լերկ կռացած  
ապառաժների տեսարան, «Թամար արայի  
ամրոց» և նրա հետ կապված լեգենդը: Դա-  
րի աւալի բերդը՝ նրա սաղմական նշա-  
նակությունը: «Սատանի կամ ուր ջ»:

Դարիալի կիրճը վորպես Կողմնակի  
շղթան խորը հատող ճեղք, վորը բանում և

յերկրաբանական կազմությանը մինչև նա-  
խաստեղծ քարատեսակները:

ԼԱՐՄԻ մուսով դեպի Ջերախի հովիտը  
(վորը բաժանում և Կողմնակի շղթան Ապա-  
ռաժոտից) և նախկին Զերախի ամրոցը,  
(վոր ոռւսները կառուցել ելին լեռնցիների  
դեմ կռվելու համար):

Ապառաժոս շղթայի ճեղքն ու նրա յեր-  
կրաբանական կազմությանը:

ԲԱԼՏԱ. Կայարանից մուտք Արոտա-  
տեղային և ապա Անտառային շղթաների  
ճեղքը, Ծանոթություն Բալտայում ոսերի և  
ինգուշների գյուղերի տների սարքավորման  
հետ:

Նատածո սառցարանային և գետային  
ուժգին բերգածքները Արոտատեղային և  
մանավանդ Անտառային շղթաների մեջ:

ՈԵԴԱՆՏ—ոռւսական ամրություննե-  
րի ավերակներ: Յարական զորքերի պայ-  
քարի պատմությունը լեռնցիների դեմ:  
ՎԼԱԴԻԿԱՎԱԿԱՍ (670 մ. ծովի մակար):

Ս. Խ. Լինային ինքնավար հանրապե-  
տությունների կենտրոն: (Ինգուշեթիա և,  
Հյուսիսային Ռուսիա, Կաղակություն):

Տեսարան Վազգվիյենուկայա փողոցի  
ծայրից առավոտյան դեպի Մեծ Կովկասի



ԱՐ  
1

ԱՐ  
2

---

ԳԻՆԸ 30 ԿՈՄ.

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0321206

8877